Կարեն Ամիրյան[1]

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց հանրային պատասխանատվությունը պետք է դիտարկել նրանց կողմից իրենց իրավունքների և պարտականությունների անպայման կատարման տեսանկյունից: Ուստի, բացի լիազորությունների, իրավունքների և պարտականությունների սահմանումից օրենսդրությունը պետք է հստակ սահմանի նաև մարմինների և պաշտոնատար անձանց իրավական պատասխանատվությունն այդ լիազորությունների, իրավունքների և պարտականությունների չկատարման համար: Այդպիսի պատասխանատվությունը համարվում է հանրային-իրավական պատասխանատվություն[2]: Հանրային-իրավական պատասխանատվության սկզբունքը, որպես պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունք, հատուկ է նաև դատական սահմանադրական վերահսկողության միջոցով սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմիններին: Սահմանադրական արդարադատության մարմինների դերը հանրային-իրավական պատասխանատվության համակարգում լիարժեք ընբռնելու համար նախևառաջ անհրաժեշտ է նշել, որ ընդհանուր առմամբ, պետական իշխանության բոլոր մարմինների և դրանց պաշտոնատար անձանց հանրային-իրավական պատասխանատվությունն ունի երկակի բնույթ: Մի կողմից վերջիններս հանդես են գալիս որպես հանրային-իրավական պատասխանատվության սուբյեկտ, իսկ մյուս կողմից՝ որպես հանրային-իրավական պատասխանատվության ենթարկող սուբյեկտ: Այս մոտեցումը վերաբերելի է նաև Սահմանադրական դատարանին այն համատեքստում, որ մի կողմից Սահմանադրական դատարանը, ինչպես պետական իշխանութ-

---

[1] ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի. գ. դ, պրոֆեսոր Գ. Գ. Հարությունյան:

[2] Տե՛ս **Վաղարշյան Ա.,** Պետության և իրավունքի տեսություն-1 (դասախոսություններ), Երևան, 2013, էջ 187:

յան բոլոր մարմինները, իր գործունեությամբ պատասխանատու և հաշվետու է հանրությանը, իսկ մյուս կողմից՝ հանդես է գալիս որպես հանրային-իրավական պատասխանատվության ենթարկող սուբյեկտ: Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանը որոշ դեպքերում հանդես է գալիս նաև որպես հանրային-իրավական պատասխանատվությանն անուղղակիորեն մասնակցություն, դերակատարություն ունեցող մարմին: Սույն աշխատանքի շրջանակներում մեր ուսումնասիրման և վերլուծության շրջանակը սահմանափակվում է միայն երկրորդ ասպեկտով: Մյուս կողմից էլ, հաշվի առնելով ուսումնասիրության հիմքում ընկած հարցերի բազմաբովանդակությունն ու ընդգրկուն լինելը, սույն աշխատանքի շրջանակներում կներկայացնենք ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից հանրային-իրավական պատասխանատվության ենթարկելուն առնչվող այն հարցերը, որոնք դատարանը կայացրել է ՀՀ սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին և 3.1 կետերով սահմանված հիմքերով գործերի քննության արդյունքներով: Սահմանադրությունը բազմագործառութային ակտ է, որը մի կողմից ամրագրում է սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտների իրավական կարգավիճակի հիմունքները, մյուս կողմից՝ կազմում այդ սուբյեկտների իրավաբանական պատասխանատվության նորմատիվ հենքը[1]: Սահմանադրական արդարադատության մարմնի գործառութային նպատակը Սահմանադրության գերակայության, դրա անմիջական գործողության ապահովումը և պաշտպանությունն է պետության ողջ տարածքում, այսինքն՝ սահմանադրական իրավական վիճակի ապահովումը և պաշտպանությունը[2]: Հանրային-իրավական պատասխանատվության սկզբունքի իրացման հարցում Սահմանադրական դատարանի դերը կանխորոշված է Սահմանադրական դատարանի նշված առաքելությամբ, այն է՝ ապահովել սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը: Սահմանադրական դատարանը հանդես է գալիս որպես կենտրոնական, բայց ոչ միակ գործիքը ժողովրդավարության և սահմանադրականության

---

[1] Տե՛ս **Oliver D.**, Constitutional Guarantees in the Right of Privatisation: From political to legal controls, Athens, 2007,

[2] Տե՛ս **Витрук Н. В.**, Цель, задачи и функции конституционного правосудия в государствах новой демократии /Конституционное правасудие/. N 2(16), 2002. էջ 10,

կայացման ճանապարհին: Հետևաբար, Սահմանադրական դատարանի դերը պետք է դիտարկել ավելի լայն տեսանկյունից՝ ընդգրկելով այնպիսի հարցեր, ինչպիսիք են ժողովրդավարությունը, սահմանադրությունը և սահմանադրականությունը[1]: Այս համատեքստում, կարևորելով Սահմանադրական դատարանի դերը հանրային-իրավական պատասխանատվության սկզբունքի իրացման գործընթացում, գտնում ենք, որ այդ դերն ամենից առաջ ընդգծվում է իր որոշումների մեջ:

Սահմանադրական դատարանը, քննության առարկա դարձնելով տարբեր իրավադրույթների սահմանադրականության հարցը, հարստացնում է իրավական պատասխանատվության մասին առկա գիտատեսական մոտեցումները, ուղղորդող դեր է ունենում իրավական պատասխանատվության հիմքում ընկած սկզբունքների իրացման չափանիշների, կիրառման շրջանակների հստակեցման և դրանք նորովի, դատարանի կողմից բացահայտված բովանդակությամբ և նրբերանգներով ընկալման գործում: Սահմանադրական դատարանի իրավական դրույթները հարստացնում են իրավաբանական պատասխանատվության բովանդակությունը, սահմանում դրանց իրականացման պայմաններն օրենսդրության և իրավակիրառության մեջ: Այս համատեքստում կարևոր ենք համարում ընդգծել, որ Սահմանադրական դատարանն իր ուրույն դերակատարությունն ունի նախևառաջ իրավական պատասխանատվության սկզբունքների բովանդակության բացահայտման մեջ: Հեղինակների կողմից տեսակետ է արտահայտվում, որ «Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները զգալիորեն հստակեցրել են սահմանադրաիրավական պատասխանատվության հիմքերի տեսական մոտեցումները: Սահմանադրական դատարանը, քննության առարկա դարձնելով ՌԴ սուբյեկտների օրենսդիր մարմինների, տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինների, պատգամավորների պատասխանատվության առանձին դրույթների սահմանադրականության հարցերը, բազմիցս արտահայտվել է իրավական պատասխանատվության ընդհանուր սկզբունքների մասին,

[1] Տե՛ս **Rait Maruste,** The role of Constitutional court in democratic society, Juridica international XIII/, 2007, էջ 8
http://www.juridicainternational.eu/public/pdf/ji_2007_2_8.pdf:

որոնք անմիջականորեն բխում են ՌԴ Սահմանադրությունից[1]»: Այսպես, օրինակ, ՀՀ Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշումներ է արտահայտել իրավական պատասխանատվության հիմքում ընկած սկզբունքներից մեկի՝ համաչափության սկզբունքի մասին՝ նշելով.

ա) «… հանրային իշխանության իրականացումը նախևառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ համաչափության ընդհանուր սկզբունքով: Այս սկզբունքը հանդիսանում է ընդհանրապես իրավաբանական պատասխանատվության և, մասնավորապես, վարչական պատասխանատվության հիմքում ընկած կարևորագույն սկզբունքներից մեկը…» (ՍԴՈ-920 որոշում),

բ) «… համաչափության սկզբունքը պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև» (ՍԴՈ-920 որոշում),

գ) «Իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սահմանադրական սկզբունքը պահանջում է նաև, որ սահմանված պատասխանատվության չափը լինի տարբերակված՝ ելնելով կատարված արարքի ծանրությունից, հանրային վտանգավորության աստիճանից, պատճառված վնասից, մեղքի աստիճանից և այլ էական հանգամանքներից: Ըստ այդմ, օրենսդրից պահանջվում է սահմանել պատասխանատվության այնպիսի իրավակարգավորում, որը պատասխանատվության ենթարկող իրավասու մարմնին հնարավորություն ընձեռի որոշելու նշանակվող պատասխանատվության կոնկրետ չափը՝ ելնելով զանցանքի բնույթից և լրջությունից» (ՍԴՈ-927 որոշում):

Իրավական պատասխանատվության հիմքում ընկած սկզբունքների մասին իր որոշումներում անդրադարձել է նաև ՌԴ Սահմանադրական դատարանը: Մասնավորապես, մեղքի հետ կապված հարցերի առնչությամբ վերջինս նշել է. «Մեղքի առկայությունը հանդես է գալիս որպես իրավական պատասխանատվության ընդհանուր սկզբունք իրավունքի բոլոր ճյուղերում, և այդ սկզբունքից ցան-

---

[1] Տե՛ս **Никифорова Н. В.,** Конституционно-правовая ответственность в правовых позициях конституционного суда российской федерации: проблемы реализации и развития, Новосибирск, 2009, էջ 43:

կացած բացառություն պետք է հստակ և միանշանակ ամրագրված լինի[1]»: Սահմանադրական դատարանի գործունեությունը հանրային-իրավական պատասխանատվության ոլորտում չի սահմանափակվում լոկ իրավական պատասխանատվության սկզբունքների բովանդակության բացահայտմամբ, այլ ընդգրկում է հարցերի ավելի լայն շրջանակ, մասնավորապես, այնպիսի հարցեր, ինչպիսիք են հանրային-իրավական նեգատիվ և պոզիտիվ պատասխանատվությունը: Ընդհանրապես, նեգատիվ պատասխանատվությունն ընդունված է ընկալել որպես հատուցում կամ բացասական հետևանք կատարած իրավախախտմանը: Իսկ պոզիտիվ պատասխանատվությունը սեփական պարտականությունների գիտակցական-կամային կատարման անհրաժեշտության և կենսականության ըմբռնմամբ պատասխանատու և հաշվետու լինելն է հանրության առջև և դրսևորվում է վերաբերելի իրավանորմերի պահպանմամբ, դրանց պահանջների կատարմամբ:

Ընդհանրացնելով գիտատեսական գրականության մեջ առկա մոտեցումները նեգատիվ և պոզիտիվ պատասխանատվության վերաբերյալ, տարածելով դրանք Սահմանադրական դատարանի որոշումների վրա՝ գալիս ենք այն եզրահանգման, որ Սահմանադրական դատարանը կայացրել է բազմաթիվ որոշումներ, որոնք հանդես են գալիս որպես պոզիտիվ հանրային-իրավական և նեգատիվ հանրային-իրավական պատասխանատվության օրինակներ: Սահմանադրական դատարանի որոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ նեգատիվ պատասխանատվությունը դրսևորվում է միայն վիճարկվող դրույթները Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու միջոցով և, հետևաբար, այն իր ամրագրում է գտնում որոշման եզրափակիչ մասում: ՀՀ Սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հարցերով քննության է առել վիճարկվող 14 ակտերի՝ ամբողջությամբ և վիճարկվող ակտերի 493 դրույթների (ներառյալ՝ կոնկրետ գործերով վեճի առարկա 55 դրույթների հետ համակարգային առու-

[1] Տե՛ս по делу о проверке конституционности положения пункта 2 статьи 1070 Гражданского кодекса Российской Федерации в связи с жалобами граждан И. В. Богданова, А. Б. Зернова, С. И. Капьянова и Н. В. Труханова: постановление Конституционного Суда РФ от 25 января 2001 г. № 1 - П // Собрание законодательства Российской Федерации. 2001. № 7, էջ 700:

մով փոխկապակցված դրույթները) սահմանադրականության հարցեր, որի արդյունքում վիճարկվող 2 ակտեր՝ ամբողջությամբ և վիճարկվող ակտերի 163 դրույթներ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր (ուսումնասիրությունն ընդգրկում է դատարանի գործունեության օրվանից մինչև 2015 թ. նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածի ընթացքում կայացված որոշումները): Այսպիսի հանրային-իրավական պատասխանատվությունը կոչվում է նեգատիվ, քանի որ հանդիսանում է այն բացասական հետևանքը, որն առաջանում է օրենսդիր մարմնի նկատմամբ իր սահմանադրաիրավական պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում: ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն. «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին»: Նեգատիվ պատասխանատվության դեպքում ստացվում է, որ օրենսդիր մարմինը թերացել է իր հիմնական գործառույթի՝ օրենքներ ընդունելու, օրինաստեղծ գործունեության հարցում և ընդունել է հակասահմանադրական դրույթներ: Սահմանադրական դատարանը նեգատիվ պատասխանատվության միջոցով վիճարկվող դրույթները ճանաչում է Սահմանադրությանը հակասող և անվավեր, ինչի արդյունքում այդպիսի դրույթները դադարում են իրավաշրջանառվել և այլևս չեն կարող հասարակական հարաբերությունների իրավակարգավորիչ հանդիսանալ: Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը, իսկ նախնական սահմանադրական վերահսկողության պարագայում՝ նույնիսկ ուժի մեջ չեն մտնում: Հակասահմանադրական ճանաչված դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնականում հակասահմանադրականությունը պայմանավորված է մարդու իրավունքների և ազատությունների՝ օրենսդրորեն ոչ բավարար և ամբողջական ճանաչմամբ, սահմանմամբ, պահպանմամբ, երաշխավորմամբ և պաշտպանությամբ, որոնք էլ իրենց հերթին հաճախ օրենսդրական բացի, իրավական անորոշության հետևանք են: Ինչ վերաբերում է պոզիտիվ հանրային-իրավական պատասխանատվությանը, ապա, ուսումնասիրելով ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները, կարևոր ենք համա-

ռում նշել, որ ՀՀ Սահմանադրական դատարանն ընդունել է ավելի քան 50 որոշումներ, որոնցում արտահայտված իրավական դիրքորոշումներով պոզիտիվ պատասխանատվության է ենթարկել պետական համապատասխան իրավասու մարմիններին, մասնավորապես, օրենսդրին, այն է՝ սահմանել համապատասխան նոր իրավակարգավորումներ՝ դրանով վերացնելով օրենսդրական հարթության մեջ առկա անկատարությունները, որոնք, ինչպես առանձին, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայի ձևախեղման հետ ամբողջականության մեջ մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների խախտման իրական վտանգ են պարունակում: Ռուսաստանի Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ 2010-2014 թթ. ընթացքում դատարանը 149 որոշումներից շուրջ 71-ում փաստել է համապատասխան նոր իրավակարգավորումներ սահմանելու անհրաժեշտության մասին[1]: Որպես ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից պոզիտիվ պատասխանատվության կիրառման օրինակ կարող ենք նշել 28.11.2007 թ. ՍԴՈ-719 որոշումը, որտեղ, մասնավորապես, ամրագրվել է, որ. «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից»: Ավելին, խոսելով հանրային իշխանության համարժեք պարտավորությունների մասին, Սահմանադրական դատարանը՝ 2007 թ. մայիսի 11-ի ՍԴՈ-701 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «…եթե Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերության

[1] Տե՛ս http://www.ksrf.ru/ru/Info/Maintenance/Informationks/Pages/Report KS2014.aspx:

դրույթները Սահմանադրական դատարանի համար հիմք են իրավական ակտի կամ դրա առանձին հակասահմանադրական դրույթի ուժը կորցնելու տարաժամկետման համար, ապա պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինները (հատկապես իրավաստեղծ) պարտավոր են այդ ժամանակահատվածում այնպիսի հնարավոր և անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել, որոնցով կկանխվեն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետևանքները: Հետևաբար, հակասահմանադրական ճանաչված և տարաժամկետված իրավական նորմերի հետագա կիրառմանը չպետք է մեխանիկական մոտեցում ցուցաբերվի, այլ այն պետք է իրականացվի՝ հաշվի առնելով տարաժամկետման հիմքում ընկած և օրենքով նախատեսված վերոհիշյալ գերակայություններից ու սահմանադրական հիմնարար սկզբունքներից բխող՝ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, բացառելով նաև հակասահմանադրական ճանաչված դրույթների վերարտադրությունը ցանկացած իրավական ակտում»: Սահմանադրական դատարանի որոշումների ուսումնասիրությունը թույլ է տալիս պոզիտիվ հանրային-իրավական պատասխանատվությունը դասակարգել մի շարք խմբերի՝ հիմք ընդունելով որոշակի չափանիշներ: Այսպես, ըստ Սահմանադրական դատարանի որոշման մեջ ամրագրման տեղի՝ պոզիտիվ հանրային-իրավական պատասխանատվություն նախատեսող իրավական դիրքորոշումներն արտացոլված են որոշման պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում: Պոզիտիվ հանրային-իրավական պատասխանատվություն նախատեսող մոտեցումները եզրափակիչ մասում տեղ են գտնում այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով և հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջները, տարաժամկետում է Սահմանադրությանը հակասող նորմի ուժը կորցնելը: Սահմանադրական դատարանը մինչ այժմ ընդունել է շուրջ 11 որոշումներ (ՍԴՈ-753, ՍԴՈ-780, ՍԴՈ-782, ՍԴՈ-873, ՍԴՈ-929, ՍԴՈ-930, ՍԴՈ-943, ՍԴՈ-984, ՍԴՈ-1121, ՍԴՈ-1127, ՍԴՈ-1142), որոնց եզրափակիչ մասում, հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմերի՝ որոշման հրապարակման պահին անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կհանգեցնի

այնպիսի հետևանքների, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմերի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սահմանել է հակասող ճանաչված նորմերի՝ իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ՝ ուղղված նախևառաջ համապատասխան իրավասու մարմիններին՝ շուտափույթ կերպով կատարել դատարանի որոշման մեջ արտահայտված պահանջները: Այսինքն, Սահմանադրական դատարանը, հակասող ճանաչված նորմերի՝ իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանելով, պոզիտիվ պատասխանատվության է ենթարկում իրավասու հասցեատեր պետական մարմիններին՝ վերջիններիս համար նախանշելով ձեռնարկվելիք անհրաժեշտ միջոցները:

Սահմանադրական դատարանի կողմից պոզիտիվ պատասխանատվության մասին վկայում են որոշումների եզրափակիչ մասում տեղ գտած պահանջները: Օրինակ, դատարանն իր 2013 թվականի դեկտեմբերի 10-ի ՍԴՈ-1127 որոշման եզրափակիչ մասում նշել է. «….նկատի ունենալով, որ անհրաժեշտ է հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված պատշաճ կարգով ուղարկելու պահանջի և գործի քննության ամբողջ ընթացքում կողմերի համար հավասար հնարավորություններ ապահովելու իրավական համարժեք երաշխիքների հստակ և համակարգված օրենսդրական կանոնակարգում… »: Մեկ այլ որոշման մեջ դատարանը նշել է, որ «… հաշվի առնելով, որ վարչական արդարադատության առկա երկաստիճան համակարգի գործունակության և արդյունավետության անհրաժեշտ մակարդակի ապահովումը կամ հիմնախնդրին համակարգային այլ լուծումներ տալը պահանջում են օրենսդրական համարժեք կարգավորումներ...» (13 ապրիլի 2010 թվականի ՍԴՈ-873 որոշում): Ըստ բնույթի պոզիտիվ հանրային-իրավական պատասխանատվությունը լինում է բացարձակ, հարաբերական, խառը և վերահաստատող: Բացարձակ ասելով՝ նկատի ունենք այդ դեպքերը, երբ դատարանը ոչ թե ընդհանրացված կերպով է փաստում անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումների (այդ թվում՝ կազմակերպատեխնիկական) անհրաժեշտության մասին, այլ կոնկրետացնում և հստակորեն նշում է դրանք: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն իր 2015 թվականի սեպ-

տեմբերի 29 ՍԴՈ-1227 որոշման մեջ հստակ իրավական դիրքորոշում է արտահայտել, որ «… իրավունքի գերակայության սկզբունքով առաջնորդվելիս Սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը դատարանների համար պետք է ընկալել ոչ միայն իրավունք, այլև պարտականություն: Օրենսդրական հետագա զարգացումները պետք է ընթանան այս ուղղությամբ»: Հարաբերական պատասխանատվության տակ հասկացվում են այն դեպքերը, երբ դատարանն ընդհանրացված կերպով է փաստում անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումների անհրաժեշտության մասին, չի կոնկրետացնում դրանք, և այդ նոր իրավակարգավորումներն առավելապես վերաբերում են երաշխիքների սահմանմանը կամ մանրամասնեցմանը, իրավունքի սկզբունքներից բխող անհրաժեշտ կանոնակարգումներին: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն իր 2010 թվականի սեպտեմբերի 7-ի ՍԴՈ-906 որոշման մեջ նշել է. «…Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը՝ հաշվի առնելով «actio popularis» բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները»:

Ինչ վերաբերում է խառը պոզիտիվ պատասխանատվությանը, ապա այն իր մեջ ամփոփում է բացարձակն ու հարաբերականը, հանդես է գալիս որպես վերջիններիս համակցություն: Այսինքն՝ մի կողմից դատարանն իր իրավական դիրքորոշման մեջ ընդհանրացված կերպով փաստում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումների անհրաժեշտության մասին, մյուս կողմից էլ՝ կոնկրետացնում և հստակորեն նշում է առավել կենսականն ու էականը: Որպես օրինակ կարող են նշել այն, որ Սահմանադրական դատարանն իր 2013 թվականի նոյեմբերի 19-ի ՍԴՈ-1124 որոշման մեջ մի կողմից նշել է, որ «…ՀՀ Ազգային ժողովը նույնպես պարտավոր է տվյալ կոնվենցիաներով ստանձնված պարտավորությունների իրացմանը համալիր մոտեցում ցուցաբերել և առաջին հերթին հաշվի առնել պատժի համաչափության սկզբունքը, ինչպես նաև հենց կոնվենցիոն նորմերից ելնելով բարեխիղճ աշխատող պետական պաշ-

տոնյաների պաշտպանության օրենսդրական համարժեք երաշխիքներ ստեղծել, հաղթահարել օրենսդրության մեջ հնարավոր ներքին անհամապատասխանությունները» (այս դիրքորոշումը հանդես է գալիս որպես պոզիտիվ հարաբերական պատասխանատվություն), իսկ մյուս կողմից՝ կոնկրետացրել և հստակորեն նշել է վերոնշյալ դիրքորոշման մեջ արտահայտված միջոցառումների որոշակի խումբ, այն է՝ «…կաշառք ստացողի համար գործուն զղջալու ակտիվ գործողությունների պարտադիր ժամկետ ամրագրելով, կամավոր հայտարարության հասկացության վերաբերյալ տարաբնույթ մոտեցումներից առավելագույնս խուսափելու, դատաքննչական մարմինների կողմից բացթողումները և սխալները հնարավորինս բացառելու նպատակով, թերևս, ՀՀ քրեական օրենսգրքում կարող էր կատարվել լրացում և օրենսգրքի 312-րդ հոդվածում, որպես ծանոթագրություն, տալ կամավոր հասկացության բնորոշումը» (այս դիրքորոշումը հանդես է գալիս որպես պոզիտիվ բացարձակ պատասխանատվություն):

Ինչպես նշեցինք, Սահմանադրական դատարանը ընդունել է նաև որոշումներ, որոնք վերահաստատող պոզիտիվ պատասխանատվությանը բնորոշ իրավական դիրքորոշումներ են պարունակում: Դրանք այն դիրքորոշումներն են, որոնցում, դատարանը, քննության առարկա գործի շրջանակներում, մատնանշելով վիճարկվող դրույթներում առկա իրավական խութերը, մի կողմից փաստում է, որ ստեղծված իրավիճակը պայմանավորված է նրանով, որ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներն իրավասու մարմինների կողմից չեն դիտարկվել իրենց ամբողջականության մեջ և չեն դարձել տվյալ իրավակարգավորումների ուղենիշ, իսկ մյուս կողմից՝ վերահաստատում տվյալ իրավահարաբերությունների սահմանադրահիրավական բովանդակության վերաբերյալ դատարանի՝ նախկինում արտահայտած դիրքորոշումները:

Պոզիտիվ հանրային-իրավական պատասխանատվության վերաբերյալ դիրքորոշումները Սահմանադրական դատարանը հիմնականում շարադրել է այն որոշումներում, որոնցում քննության առարկա իրավադրույթները ճանաչվել են սահմանադրությանը համապատասխանող կամ սահմանադրությանը համապատասխանող՝ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում: Սակայն ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ

Սահմանադրական դատարանը պոզիտիվ հանրային-իրավական պատասխանատվության վերաբերյալ դիրքորոշումներ արտահայտել է նաև Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված, ինչպես նաև կարճման որոշումներում (թվարկված վերջին հանգամանքի մասին են վկայում ՍԴՈ-1124, ՍԴՈ-1140, ՍԴՈ-1143, ՍԴՈ-1227 որոշումները):

Ամբողջացնելով շարադրված մոտեցումները՝ կարող ենք փաստել, որ Սահմանադրական դատարանի դերը հանրային-իրավական պատասխանատվության գործում նախևառաջ պայմանավորված է պետական իշխանության համակարգում դատարանի դերակատարությամբ: Սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներով կատարելագործում է իրավական մշակույթը, այդ թվում՝ սահմանադրական մշակույթը, որը «սահմանադիր նորմերով ու սկզբունքներով, փոխհամաձայնությամբ ձեռք բերած հասարակական գոյի ընդհանուր կանոներով ստեղծագործաբար ապրելու մարդկային հանրության արժեքային որոշակի համակարգ է»[1]: Այն նպաստում է նաև իրավական համակարգի կատարելագործմանը, իրավական քաղաքականությունն իրավունքի գերակայության սկզբունքին ներդաշնակ ու համահունչ դարձնելուն:

[1] Տե՛ս **Հարությունյան Գ.,** Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, 2005, էջ 20:

Karen Amiryan
PHD Student at the YSU Chair of Theory of State and Law

THE ROLE OF THE CONSTITUTIONAL COURT IN THE PROCESS OF REALIZATION OF THE PRINCIPLE OF PUBLIC LEGAL LIABILITY

Within the framework of the present work the subject of discussion by the author has become the role of the RA Constitutional Court in the context of exercise of the principle of public-legal liability. The Constitutional Court has been regarded from the perspective of a subject bringing to public-legal liability only under the paragraphs 1 and 3.1 of the Article 100 of the RA Constitution. Within the scope of the ideas put forward by the author the negative and positive aspects of the decisions by the bodies administering constitutional justice have been observed, content of the latter has been disclosed, a certain classification has been done.

In particular, the positive public-legal liability has been classified in the following way: absolute, relative, mixed, and reaffirming. As a result, the analysis indicates that prescribing public-legal liability in its decisions, the RA Constitutional Court enriches the existing scientific-theoretical approaches to legal liability, plays a guiding role in the precision of the application framework of the standards for the exercise of principles laid at legal liability, and in their perception in a new way: by the content and nuances revealed by the court.

Карен Амирян
Аспирант кафедры теории и истории государства и права ЕГУ

РОЛЬ КОНСТИТУЦИОННОГО СУДА РА В ПРОЦЕССЕ РЕАЛИЗАЦИИ ПРИНЦИПА ПУБЛИЧНО-ПРАВОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

В рамках настоящей работы, предметом рассмотрения автора стала роль Конституционного суда Республики Армения в контексте осуществления принципа публично-правовой ответственности. Конституционный суд был рассмотрен только с позиций субъекта подвергающего публично-правовой ответственности, в контексте пол-

номочий, установленных пунктами 1 и 3.1, статьи 100, конституции Республики Армения.

В рамках идей, выдвинутых автором, решения органов осуществляющих конституционное правосудие, были рассмотрены в негативном и позитивном аспектах, было раскрыто содержание последних, была произведена определенная классификация. В частности, по характеру, позитивная публично-правовая ответственность была квалифицирована следующим образом: абсолютная, относительная, смешанная и переподтверждающая. В итоге, проведенное исследование свидетельствует, что в своих решениях Конституционный суд Республики Армения предусматривая публично-правовую ответственность, обогащает имеющиеся научные подходы к правовой ответственности, имеет направляющую роль в уточнении критериев реализации принципов положеных в основе правовой ответственности, границ примемения и в деле понимания их по-новому, с выявленным судом содержанием и оттенками.

Բանալի բառեր՝ *պատասխանատվություն, իրավական պատասխանատվություն, հանրային-իրավական պատասխանատվություն, պետական իշխանության պատասխանատվություն, պոզիտիվ պատասխանատվություն, նեգատիվ պատասխանատվություն, Սահմանադրական դատարան, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշում:*

Keywords: *liability, legal liability, public-legal liability, state authority liability, positive liability, negative liability, constitutional court, legal position of the Constitutional Court.*

Ключевые слова: *ответственность, правовая ответственность, публично-правовая ответственность, ответственность государственной власти, позитивная ответственность, негативная ответственность, конституционный суд, правовая позиция конституционного суда.*